ՎԱՆ ՄԻՆ

# ՃԱՊՈՆԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԱԳՐԵՍՍԻԱՅԻ ՆՈՐ ԵՏԱՊԸ ՅԵՎ ՉԻՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԸ

32
Վ-27

ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ԲՈԼՇԵՎԻԿ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ, 1937

26 SEP 2006
1 DEC 2009
32
Վ-22 Աγ

ՎԱՆ ՄԻՆ

# ՃԱՊՈՆԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԱԳՐԵՍՍԻԱՅԻ ՆՈՐ ԵՏԱՊԸ ՅԵՎ ՉԻՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԸ

ԹԱՐԳ. Լ. ՋՈՀՐԱԲՅԱՆԻ

ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ
„ԲՈԼՇԵՎԻԿ" ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ, 1937

07 AUG 2013

14898

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Ի՞նչ է ճապոնական զինվորականության նոր հարձակման իսկական պատճառը Չինաստանի վրա . . . . . . . . . . . . . . . . 3

Կարող է արդյոք Չինաստանը հաջող զինված դիմադրություն ցույց տալ ճապոնական ագրեսորին . . . . . . . . . . . . . . . . 6

Ի՞նչպես կազմակերպել չինական ժողովրդի համազգային զինված դիմադրությունը և ապահովել նրա հաղթանակը . . . . . . . . . 14

Չինաստանի կոմկուսի խնդիրները . . . . . . . . . . . . . 26


ՀՍՍՀ ... ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. библиотека
ССР
им. А. Мясникяна

854
38

Ответ. редактор *Чатыньян П. А.*
Техред *Жданович Л. М.* Корректор *Григорян С.*

Сдано в набор 19 ноября 1937 г., подписано в печать 27 декабря 1937 г.
Формат 58x84/16. Объем 2 п. л. Тираж 2000

Уполоблит №С—6935. Типография Обл. армянского издательства „Большевик" (Ростов-Дон, Ворошиловский пр. 27). Заказ № 2226.

Ճապոնիայի հափշտակիչներն սկսեցին մի նոր ռազմական խոշոր հարձակում Չինաստանի վրա։ Չինական զորքերը զինված դիմադրություն են ցույց տալիս ճապոնական ագրեսորին։ Չինաստանն այրվում է։ Փաստորեն արդեն սկսվել է մինչև այժմ չտեսնված չափերի ճապոնա-չինական պատերազմը։

Սույն թվի հուլիսի 7-ին ճապոնական զինվորականությունը հանկարծակի կերպով հարձակվեց Լյուկոուցզյաոյի վրա և հերոսական հակահարված ստացավ 29-րդ չինական զորաբանակի 37-րդ դիվիզիայից։ Օժանդակ զորքեր հասցնելու համար ժամանակ շահելու և իրենց պատերազմական նոր գործողությունների իսկական պլանները հասարակական կարծիքից ծածկելու նպատակով, ճապոնական զինվորականությունը յերկերեսանի կերպով Լյուկոուցզյաոյի դեպքը հայտարարեց «պատահական», «տեղական միջադեպ»։ Սակայն հետագա փաստերը մինչև վերջը դիմակազերծ արին ճապոնական ագրեսորի նոր հարձակման իսկական նպատակը Չինաստանում։

## Ի՞ՆՉ Է ՃԱՊՈՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԻՍԿԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՎՐԱ

Իմպերիալիստական Ճապոնիայի տիրող դասակարգերը միշտ էլ յերազել են հաստատել Չինաստանում իրենց տիրապետությունը և լիովին ստրկացնել չինական ժողովուրդը։ Ճապոնական իմպերիալիզմի ագրեսիվ գործողությունների պատմությունը Չինաստանի վերաբերյալ կարելի յե բաժանել հետևյալ չորս հիմնական էտապների.

Առաջին էտապ — ճապոնա-չինական պատերազմից (1895 թ.) մինչև համաշխարհային իմպերիալիստական պատերազմը (1914—1918 թ. թ.)։ Այդ ժամանակամիջոցում Ճապոնիան հափշտակեց Չինաստանից նրա սեփական և ստորակա տերիտորիաները՝ Լյու-Կյու, Ֆորմոզա և Պեսկադորյան կղզիները, Կվանտունի մարզի կոնցեսիան և Կորեան։

Յերկրորդ էտապ—համաշխարհային իմպերիալիստական պատերազմից մինչև 1931 թ. սեպտեմբերի 18-ի Մուկդենի դեպքերը: Ճապոնական իմպերիալիստները գրավեցին Ցզյաոչժոուն և Ցինդաոն (այն ժամանակվա գերմանական կոնցեսիաները Չինաստանում), շարժեցին իրենց զորքերը Ցզինան քաղաքի վրա, իսկ 1915 թ. հունվարի 18 ին Յուան Շի-կային ներկայացրին այսպես կոչված 21 պահանջները, վորոնց անցկացումը նշանակում էր Չինաստանի փաստական վերածումը ճապոնական գաղութի:

Յերրորդ էտապ—1931 թ. Մուկդենի դեպքերից մինչև սույն տարվա հուլիսյան դեպքերը Լյուկոուցզյաոյում: Այդ վեց տարվա ընթացքում ճապոնական իմպերիալիստները գրավեցին հյուսիս-արևելյան յերեք պրովինցիաները (այսինքն Մանջուրիան) և այսպես կոչված Ներքին Մոնղոլիայի տերրիտորիայի մի մասը (Ժեխեյի ամբողջ պրովինցիան և Հյուսիսային Չախարի վեց գավառները): Մանջուրիայի և Ժեխեյի գրավումը ճապոնական իմպերիալիզմի կողմից հսկայական տնտեսական և քաղաքական հարված հասցրեց Չինաստանին:

Չորրորդ էտապն սկսվում է ճապոնական հարձակումով Լյուկոուցզյաոյի վրա: Այդ հարձակման անմիջական և առաջնահերթ խնդիրը Չինաստանի հյուսիսային հինգ պրովինցիաների (Խեբեյի, Չախարի, Սույյուանի, Շանսիի, Շանդունի) գրավումն էր: Այդ հինգ պրովինցիաների գրավումը կտրամադրեր ճապոնական իմպերիալիզմին հումույթի այնպիսի հարուստ աղբյուրներ, այնպիսի ընդարձակ և հարուստ շուկա, վորպիսին դեռ չգիտեր ճապոնական իմպերիալիզմի ամբողջ պատմությունը: Սակայն ճապոնական զորքերի պատերազմական գործողությունները Շանհայ-Նանկինյան շրջանում վկայում են, վոր ճապոնական ագրեսորն այս անգամ չի սահմանափակվում միայն հյուսիսային պրովինցիաների շրջանակներում մղած պատերազմական գործողություններով:

Ճապոնական իմպերիալիզմի արդի պատերազմական գործողությունները՝ Մանջուրիայի և Ժեխեյի գրավումից հետո, հանդիսանում են Չինաստանը լրիվին կլանելու և Հնդկաստանի, Հնդկաչինի, Ֆիլիպյան կղզիների, Ինդոնեզիայի և Ավստրալիայի գրավման նախապատրաստումը, ինչպես և ԽՍՀՄ, ԱՄՆ և Անգլիայի դեմ «մեծ պատերազմ» նախապատրաստելու Տանակայի հռչակավոր պլանի կատարման մի նոր էտապ՝ համաճապոնական միապետության կողմից համաշխարհային գերիշխանություն նվաճելու նպատակով: *«Ամբողջ Չինաստանը նվաճելու համար անհրաժեշտ է նախ գրավել Մանջուրիան և Մոնղոլիան, իսկ ամբողջ աշխարհը նվաճելու համար անհրաժեշտ է գրավել ամբողջ Չինաստանը»—ահա թե Տանակայի ինչպիսի նվիրական գաղափարն է փորձում իրականացնել ճապոնական ֆաշիստական զինվորականությունը:*



Գերմանական և իտալական ֆաշիստական ագրեսորների բացահայտ ինտերվենցիան Իսպանիայում և այդ կապակցությամբ դրության խիստ սրումն ամբողջ Յեվրոպայում, անգլիական կառավարության վարած՝ ֆաշիստական ագրեսիայի փաստական թողտվության քաղաքականությունը ինչպես Հաբեշստանի և Իսպանիայի վերաբերյալ, նույնպես և Չինաստանի նկատմամբ, ԱՄՆ-ի սպասողական դիրքը, Ազգերի Լիգայի անկարողությունը պատերազմի ֆաշիստական հրձիգների առաջ, Ճապոնիայի, Գերմանիայի և Իտալիայի միջև դաշինք կնքվելը և, վերջապես, միջազգային պրոլետարիատի իրոք մարտական միասնականության գործողությունների բացակայությունը ֆաշիզմի և պատերազմի դեմ, վորը Սոցիալիստական ինտերնացիոնալի ռեակցիոն լիդերների Կոմինտերնի առաջարկներից հրաժարվելու հետևանք է,—ահա արդի միջազգային կացության այն հիմնական փաստերը, վորոնք հեշտացնում են ճապոնական ֆաշիստական զինվորականության ռազմագրավողական պլանների իրագործումը և քաջալերում են նրան նորանոր ագրեսիվ գործողությունների համար Չինաստանում:

Հակապատերազմական և հակաֆաշիստական տրամադրությունների աճը Ճապոնիայի աշխատավորական մասսաների մեջ, աշխատանքի ու կապիտալի ընդհարման աճումը կալվածատերերի ու գյուղացի-արենդատորների մեջ, ֆինանսական դժվարությունների ուժեղացումը և բուրժուազիայի չափավոր մասի դժգոհության աճը ֆաշիստական զինվորականության ավանտյուրիստական քաղաքականությունից, մի զինվորականություն, վորը տանում է յերկիրը դեպի լիակատար տնտեսական և ռազմական կատաստրոֆան,—ահա այն փաստերը հենց իր՝ Ճապոնիայի դրության մեջ, վորոնք դրդում են ճապոնական զինվորականությանը արագացնել իրենց ագրեսիան մայր ցամաքի վրա: Ֆաշիստական զինվորականությունը փորձում է՝ պատերազմական ավանտյուրայի միջոցով չինական ժողովրդի դեմ, հրահրել շովինիստական տենդը, շեղել ժողովրդական մասսաների ուշադրությունը յերկրի ներքին վիճակից և մտցնել արտակարգ դրություն, վորպեսզի անխնա կերպով ճնշի հեղափոխական շարժումը և ամեն տեսակի օպոզիցիոն տրամադրություն ունեցող ուժերը:

Ճապոնական զինվորականությունն արագացնում է իր հարձակումը Չինաստանի վրա, նպատակ ունենալով ճնշել չինական ժողովրդի օրեցօր աճող հակաճապոնական շարժումը: Նա իր առաջ խնդիր է դնում՝ ջախջախել կենտրոնական ազգային Նանկինյան կառավարությունը, կործանել միասնական հակաճապոնական ազգային ֆրոնտի դասավորվող ուժերը ու նրանց գլխավոր մասնակիցներին՝ Գոմինդանը և Չինաստանի կոմկուսը, վորպեսզի գլխատի և կազմալուծի չինական ժողովրդի դիմադրությունը և Չինաստանը դարձնի իր գաղութը:

Սակայն վստահությամբ կարելի յե ասել, վոր լկտի ագրեսորները այս անգամ իրենց հաշիվների մեջ կսխալվեն։ Չինաստանն այսօր այն չէ, ինչ մանջուրական դեպքերի ժամանակ։ Չինական ժողովուրդը պատրաստ է վճռական դիմադրություն ցույց տալ ճապոնական զինվորականությանը. այս մասին վկայում է նաև Նանկինի կառավարության ղեկավարի և չինական բանակի գլխավոր հրամանատար Չան Կայ-շիի նորերս արած հայտարարությունները։ Լյուկոուցզյաոյի դեպքերի կապակցությամբ Չան Կայ-շին հուլիսի 17-ին Գուլինում ունեցած յելույթում ասաց, վոր «Լյուկոուցզյաոյի դեպքերի հետագա զարգացումը Չինաստանի համար կյանքի և մահվան խնդիր է»։ Իսկ ճապոնացիների կողմից Բեյպինի և Տյանցզինի գրավման կապակցությամբ, հուլիսի 30-ին, Սենտրալ Նյուս գործակալության թղթակցի հետ ինտերվյու ունեցած ժամանակ նա հայտարարեց. «Մեր ամբողջ ժողովուրդը, տեսնելով, վոր յերկիրն ապրում է կրիտիկական մոմենտ, յերբ խոսքը մեր գոյության մասին է, վորպես մի մարդ կկռվի մինչև վերջը»։ Չինական զորքի և օդային նավատորմի մի մասն արդեն սկսել է ազգային-պաշտպանողական ռազմական գործողությունները Շանհայում, Խանչժոույում, Նանկինում, Նանչանում, Խեբեյում և Չախարում ճապոնական ագրեսորի դեմ։ Չինական ժողովրդի զայրույթի և նրա ագրեսորի դեմ վճռական պայքարին պատրաստ լինելու մասին փայլուն կերպով վկայում է այն փաստը, վոր յերկրի հակաճապոնական կազմակերպված քաղաքական և զինվորական բոլոր ուժերն սկսել են համախմբվել չտեսնված տեմպերով։ Այսպես, Նանկինում կայացած ազգային պաշտպանության կոնֆերենցիայում, վորտեղ, բացի յերկրի բոլոր ականավոր զինվորական լիդերներից, կառավարությունն առաջին անգամ հրավիրել էր նաև Չինաստանի Կարմիր բանակի առաջնորդներ՝ Չժուդեյին, Մաո Ցզեդունին և Չժոու Ենլային, գոմինդանի, կոմկուսի և մյուս կազմակերպությունների միջև համագործակցության խնդրում խոշոր տեղաշարժեր են ձեռք բերված։ Չինաստանում փաստորեն արդեն անց է կացվում զինվորական ուժերի, մասնավորապես չինական հակաճապոնական ժողովրդական Կարմիր բանակի զորակոչ՝ ընդհանուր ազգային թշնամու դեմ միասին պայքարելու համար։

## ԿԱՐՈ՞Ղ Ե ԱՐԴՅՈՔ ՉԻՆԱՍՏԱՆԸ ՀԱՋՈՂ ԶԻՆՎԱԾ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼ ՃԱՊՈՆԱԿԱՆ ԱԳՐԵՍՍԻԱՅԻՆ

Չինաստանի կոմկուսը Մանջուրիայի դեպքերի հենց առաջին որերին այս հարցին տվեց անյերկդիմի, դրական պատասխան։ Չինական ժողովրդի հսկայական մեծամասնությունը այդ տեսակետին է։ Սակայն Չինաստանի քաղաքական և զինվորական



գործիչներից շատերը «Ճապոնիայի առաջ ունեցած վախից» և ճապոնասեր տարրերի ազդեցության շնորհիվ յերկար ժամանակ դեմ եյին ճապոնական ագրեսիային զինված դիմադրություն ցույց տալուն։ Ճիշտ է, այդ այսպես կոչված «չդիմադրելու թեոռիայի» կողմնակիցների թիվը որեցոր նվազում է։ Սակայն նրանց պատճառաբանությունների մինչև վերջ մերկացումը կազմում է անբաժան մասն այն ընդհանուր պայքարի, վոր մղվում է որեցոր ուժեղացող ճապոնական ագրեսիայի դեմ՝ իսկական զինված դիմադրությունն իրագործելու համար։

Այս տեսության կողմնակիցները, վորոնք անհնարին են համարում, վոր զինված պայքարում Չինաստանը կհաղթի Ճապոնիային, պնդում են, վոր Չինաստանը ռազմա-տեխնիկական և արդյունաբերական տեսակետից թույլ յերկիր է, և դեռ պատրաստված չէ զինված դիմադրություն ցույց տալու արտաքին թշնամուն. յեթե Չինաստանը զինված դիմադրություն ցույց տա ճապոնական ագրեսորին, ապա անխուսափելիորեն կընկնի Հաբեշստանի կամ, լավագույն դեպքում, Իսպանիայի վիճակի մեջ։ Նրանք ընդսմին դիտավորյալ կերպով սքողում են այն հսկայական տարբերությունը, վոր կա Չինաստանի և Հաբեշստանի կամ նույնիսկ Իսպանիայի մեջ՝ հափշտակիչի դեմ պայքարելու համար սեփական ուժ և միջոցներ ունենալու տեսակետից։

Ռազմա-տեխնիկական և արդյունաբերական տեսակետից Չինաստանն իսկապես ներկայացնում է իրենից մի թույլ յերկիր, և հենց այդ իսկ պատճառով էլ մեզ՝ չինացիներիս հարվածել են կապիտալիստական բոլոր մեծ և նույնիսկ փոքր յերկրները։ Չինաստանի այս թուլությունն ընդգծեց ժողովրդների առաջնորդ Ի. Վ. Ստալինն իր առաջին հնգամյակի արդյունքների մասին արած զեկուցման մեջ։ Ընկեր Ստալինն ասաց, վոր առանց ինդուստրիացման ԽՍՀՄ դրությունը ավելի կամ պակաս չափով նման կլիներ այժմյան Չինաստանի դրությանը, «վորը չունի իր ծանր արդյունաբերությունը, չունի իր ռազմական արդյունաբերությունը և վորին կտցահարում են բոլոր նրանք, ովքեր չեն ծուլանում»[1]։ Չինացի կոմունիստները հիանալի կերպով հասկանում են, վոր ծանր արդյունաբերության զարգացման աստիճանը և զորքի ռազմա-տեխնիկական սարքվածությունը հսկայական նշանակություն ունին ժամանակակից պատերազմում։ Սակայն դրա հետ միասին մարքսիստ-լենինեցներն ընդունում են և մի ուրիշ, պատմությամբ ստուգված ճշմարտություն, վոր վերջին հաշվով պատերազմի յելքը վորոշում են կենդանի մարդիկ։

Մինչև ատամներն սպառազինված ճապոնական իմպերիալիզմին զինված դիմադրություն ցույց տալու համար՝ Չինաստանը

---

1) Ստալին. Լենինիզմի հարցերը. էջ 492, կուսհրատ, 10-րդ հրատ.։

պարտական է պատրաստվել։ Բայց ինչպես «Չինաստանի հաղթանակի անհնարինության» կողմնակիցները խնդրի լուծումը գըտնում են միմիայն արտասահմանում զենք գնելու և յերկրի ներսում ռազմամթերքների արտադրությունն ավելացնելու մեջ, վորովհետև նրանց կարծիքով, քանի դեռ Չինաստանը չունի այնպիսի սպառազինում, վորպիսին ունի հակառակորդը, նա չի կարող հաջողությամբ զինված դիմադրություն ցույց տալ ագրեսորին։ Չինաստանի վերազինումն ու լրացուցիչ զինավառումը, իհարկե, անհրաժեշտ են, սակայն դատողությունները այն մասին, վոր, քանի դեռ Չինաստանի սպառազինումը չի համապատասխանում Ճապոնիայի սպառազինման, նա չի կարող դիմադրել ճապոնական ագրեսիային, հիմնովին սխալ են և վնասակար։ Սխալ ու վնասակար են՝ նախ և առաջ նրա համար, վոր Չինաստանն այդ տեսակետից անչափ հետ է մնացել Ճապոնիայից, և Ճապոնիան թույլ չի տա Չինաստանին հանգիստ կերպով հասնել իր սպառազինման մակարդակին։ Մանջուրիայի և Ժեխեյի լայնատարած տերիտորիայի գրավումը ճապոնական ագրեսորների կողմից նրա հսկայական հարստություններով և միջոցներով արդեն իսկ մեծ հարված հասցրեց Չինաստանի պաշտպանունակությանը. իսկ յեթե Չինաստանն այժմ էլ կորցնի հինգ հյուսիսային պրովինցիաները և Շանհայ-Նանկինյան շրջանը, այն ժամանակ նրա պաշտպանունակությունն արտակարգ կերպով կթուլանա։

Ի՞նչ է նշանակում Չինաստանի պաշտպանության համար Մանջուրիայի, Ժեխեյի և հինգ հյուսիսային պրովինցիաների կորուստը։ Չէ՞ վոր դա նշանակում է կորցնել ամբողջ բնակչության $1/4$-ից ավելին, ամբողջ տերրիտորիայի $1/5$-ից ավելին, բոլոր յերկաթահանքերի պաշարների $9/10$-ը, բոլոր յերկաթուղիների $2/8$-ը, ածխի արտադրման $4/5$-ը և բոլոր ածխային պաշարների $1/2$-ը, ամբողջ աղի արտադրման $1/2$-ը և այլն։ Պարզ է, վոր յեթե Չինաստանը չկարողանա պաշտպանել այդ շատ հարուստ պրովինցիաները ճապոնական օկուպացիայից, նա վոչ միայն իր բնակչության հսկայական մասը կմատնի ճապոնական բարբարոսների կամայականությանը, իր խոշոր տերրիտորիան՝ թշնամու ռազմական գործողությունները հեշտացնելու, իր հարուստ ածխի, յերկաթահանքերի, աղի պաշարները և իր յերկաթուղիները՝ մահացու թշնամու ձեռքը, այլ միևնույն ժամանակ նա վերջնականապես կզրկվի հումույթի բազայից և հիմքից՝ իր ծանր ու ռազմական արդյունաբերությունը զարգացնելու համար։ Յեվ հետո, ի՞նչ է նշանակում Չինաստանի համար Շանհայի կորուստը։ Դա նշանակում է վոչ միայն յերկրի ամենախոշոր տնտեսական, արդյունաբերական, քաղաքական և կուլտուրական քաղաքի կորուստ, այլ նաև թշնամուն հանձնել ամենակարևոր ռազմա ստրա-



տեգիական կենտրոնը և ճապոնական ագրեսորի առաջ բաց անել դռները դեպի Ցանզը գետի բոլոր հարուստ ռայոնները և մշտական սպառնալիք ստեղծել չինական հանրապետության մայրաքաղաք Նանկինին։ Յեթե չինական ժողովուրդը չկարողանար պաշտպանել Շանհայ-Նանկինյան շրջանը, ագրեսորը կհարվածեր Չինաստանի հենց սրտին։

«Չինաստանի հաղթության անհնարինության» կողմնակիցներին պետք է մատնանշել և այն, վոր դրսից զենք գնելը և օգնություն ստանալը ներկա մոմենտում նույնպես խոշոր չափով կախված է հենց իր՝ Չինաստանի դիմադրական ույժից և հաջողություններից։ Մեր ժամանակի դառն ճշմարտությունն այն է, վոր թույլերին ու նրանց, վորոնք իրենք իրենց չեն պաշտպանում, վոչ վոք հաշվի չի առնում։ Իսկ յեթե Չինաստանը Ժեխեյից և Մանջուրիայից հետո կորցնի իր հյուսիսային պրովինցիաները, կորցնի իր կարևորագույն Շանհայ—Նանկինյան շրջանը, նա էլ ավելի կաղքատանա ու կթուլանա, և այն ժամանակ կպակասեն նաև արտասահմանից փոխառություն, զենք և այլ տեսակի օգնություն ստանալու նրա յերաշխիքներն ու հնարավորությունները։ Ընդհակառակը, յեթե Չինաստանն այժմ լուրջ կերպով անցնի զինված պայքարի՝ իր տերիտորիալ ամբողջությունն ու ազգային անկախությունը պաշտպանելու համար, ապա նա կարող է պայքարի պրոցեսում վերազինվել և՛ ի հաշիվ իր միջոցների, և՛ ի հաշիվ արտասահմանից գնած զենքի։ Այս մասին ավելի քան պարզ վկայում է իսպանական ժողովրդի հերոսական պայքարի փորձը՝ Ֆրանկոյի ֆաշիստական խռովարարության և գերմանա-իտալական ինտերվենցիայի դեմ։ Իսպանիայի տերիտորիան անհամեմատ ավելի փոքր է Չինաստանից, նրա բնակչությունը 20 անգամ պակաս է Չինաստանի բնակչությունից։ Արդյունաբերության զարգացման տեսակետից Իսպանիան Յեվրոպայի ամենահետամնաց յերկրներից մեկն է։ Իսպանիայի հանրապետական կառավարությունն իր ռազմական գործողությունները ֆաշիստական խռովարարների դեմ սկսեց վատ զինված բանվորներից և աշխատավորներից բաղկացած անկանոն զորամասերով։ Սակայն ժողովրդական ֆրոնտի բոլոր կուսակցությունների և կազմակերպությունների, և առաջին հերթին շնորհիվ Իսպանիայի կոմկուսի ջանքերի, շնորհիվ միջազգային պրոլետարիատի և դեմոկրատական ու հակաֆաշիստական ուժերի համերաշխության, Իսպանական հանրապետությունն իր մի տարվա զինված պայքարի պրոցեսում վոչ միայն ստեղծեց կեսմիլիոնանոց կանոնավոր բանակ, այլ և կարողացավ զինել նույն բանակը ժամանակակից ռազմական տեխնիկայով։ Իսկ յեթե համեմատաբար փոքր Իսպանական հանրապետությունը կարողացավ զինված պայքարի պրոցեսում պատրաստել իր բանակը և անհրաժեշտ

ապառազինումը, ապա ինչու նույնը չի կարող անել հսկայական Չինական հանրապետությունը։ Եթե հանրապետական Իսպանիան հաջողությամբ զինված դիմադրություն է ցույց տալիս ներխուժած ֆաշիստական Գերմանիայի և Իտալիայի միացյալ ուժերին, ապա ինչու հսկայական Չինաստանը չի կարող հաջողությամբ զինված դիմադրություն ցույց տալ միայն ճապոնական ագրեսորի զինվորական ուժերին։ Չէ՞ որ ճապոնական ագրեսորը բացի ռազմատեխնիկական առավելությունից պատերազմի առաջին շրջանում, մնացած նախադրյալների տեսակետից, որոնք անհրաժեշտ են հաղթանակն ապահովելու համար, զիջում է չինական ժողովրդի միացյալ ազգային ուժերին։

«Չինաստանի հաղթության աննարինության» կողմնակիցները յենթադրում են, որ որքան թույլ լինի դիմադրությունն արտաքին ագրեսորի հանդեպ, այնքան պակաս կլինի Չինաստանի զոհերի թիվը։ Սակայն իրենց, ճապոնա-չինական հարաբերությունների անվիճելի պատմական փաստերն ամբողջովին հերքում են նրանց այդ կարծիքը։ 1895 թվականին Չինաստանը ճապոնական ագրեսիային զենքով դիմադրեց։ Թեպետ այդ դիմադրության ժամանակ Չինաստանը պարտություն կրեց. սակայն նա կորցրեց համեմատաբար աննշան տերիտորիա։ 1914—1919 թվականներին չինական ժողովուրդը վճռաբար բողոքեց ճապոնական ագրեսիայի դեմ, որի հետևանքը յեղավ այն, որ ճապոնական իմպերիալիզմին չհաջողվեց ստիպել Չինաստանին՝ կատարել ստորացնող 21 պայմանները։ Բայց 1931 թվին, Մուկդենի դեպքերի կապակցությամբ, Նանկինի կառավարությունը տանում էր չդիմադրելու քաղաքականություն. այս քաղաքականության արդյունքն էր, որ Ճապոնիան ամենակարճ ժամանակամիջոցում առանց պատերազմի յենթարկեց ամբողջ Մանջուրիան և նրանից անմիջապես հետո յել՝ Ժեխեն։ Վերջին հարյուր տարվա ընթացքում սա Չինաստանի ամենախոշոր տերիտորիալ կորուստն է։ 1932 թվին չինական 19-րդ և 5-րդ բանակները Շանհայի պրոլետարիատի և կոմունիստների հետ միասին հերոսական դիմադրություն ցույց տվին ճապոնական զորքերին, որի հետևանքով Չինաստանը փրկեց իր Շանհայը ճապոնական օկուպացիայից։ 1936 թվին Սույուան-շանսիի զորքերը հերոսական հակահարված տվին այսպես կոչված միացյալ ճապոնա-մոնղոլա-մանջուրական զորքերին, դրա հետևանքով ագրեսորը ժամանակավորապես ստիպվեց նահանջել այդ պրովինցիաներից։ Իսկ այժմ, ճապոնական նոր ռազմական խոշոր ներխուժման կապակցությամբ, Չինաստանի առաջ հարցը շատ սուր կերպով է դրված. կամ լրջությամբ պաշտպանել իր ազգային գոյությունը—և դա կլինի կենդանություն, կամ չդիմադրել ճապոնական ագրեսիային—յեվ դա կլինի մահ։ Չինական ժողովուրդը յերկու հնա-



րավոր ուղիներից պետք է ընտրի մեկը—կամ յենթարկվել «Չինաստանի հաղթության անհնարինության» կողմնակիցների քարոզին ու գնալ չդիմադրելու ուղիով, որպես թե «խուսափելով չափազանց զոհերից», դրանով իսկ ամբողջ Չինաստանը զոհաբերել հափշտակիչներին, կամ գնալ իսպանական ժողովրդի ուղիով, այսինքն թեկուզ ժամանակավոր և մասնակի զոհերի գնով պահպանել դեռ չկորցրած տերիտորիաներն ու հարստությունները և հետ նվաճել այն հողերն ու ժողովրդական սեփականությունը, որ արդեն գրավված են ագրեսորի կողմից, որով և ազատել Չինաստանի աշխատավորներին Ճապոնիայի ֆաշիստական զինվորականության բարբարոսությունից և ամբողջ չինական ժողովուրդը՝ ստրկացումից։ Այլապես ասած, կամ մասնակի և ժամանակավոր զոհերի գնով պաշտպանել և հետ նվաճել ամեն ինչ, կամ, խոսքերով միայն պնդելով «մեծ զոհեր տալու չկամության» մասին, իրականում կորցնել բոլորը՝ ազգային անկախություն, ժողովրդական ազատություն, յերկրի հարստություն։ Միջին ճանապարհ չկա։

«Չդիմադրելու թեորիայի» կողմնակիցները՝ յելնելով Չինաստանի հաղթանակի կարծեցյալ անկարելիությունից, բերում են նաև միջազգային բնույթ կրող նկատառումներ։ Նրանց կարծիքով Չինաստանի ներքին դրությունն առայժմ անբարեհաջող է ճապոնական ագրեսորին զինված դիմադրություն ցույց տալու համար։

Այո, Չինաստանի արտաքին դրությունն այսօր դեռ այնքան էլ փայլուն չէ, ինչպես ցանկալի յեր մեզ՝ մեր յերկրի պաշտպանության տեսակետից։ Սակայն Ճապոնիայի դրությունն էլ ավելի լավ չէ, քան Չինաստանինը։ Ճապոնական նոր ագրեսիան սպառնում է ոչ միայն չինական ժողովրդի ազգային գոյությանը, այլ սպառնում է նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների, Անգլիայի և Ֆրանսիայի շահերին։ Ճապոնիան իր ագրեսիայով խախտում է ազգերի Լիգայի կանոնադրությունը, ինը պետությունների պայմանագրային պարտականությունները և այլ միջազգային համաձայնություններ, նա օժանդակում է ֆաշիստական Գերմանիայի և Իտալիայի ագրեսիային Իսպանիայում և ամբողջ Եվրոպայում, նա սպառնում է ընդհանուր խաղաղությանը։ Այժմ դրությունը դասավորվում է այնպես, որ միջազգային խաղաղության պահպանումը կախված է նախ յեվ առաջ ֆաշիստական հափշտակիչների պարտությունից Իսպանիայում յեվ Չինաստանում»[1]:

Ճապոնական իմպերիալիզմի արտաքին դրության վատանալը հեշտացնում է չինական ժողովրդի պայքարը։ Միջազգային մըր-

---

1) Գ. Դիմիտրով, Ֆաշիզմը—դա պատերազմ է, էջ 10, Կուսհրատ, 1937 թ.

ցարտնում Ճապոնիան, ավելի քան յերբևիցե, գտնվում է անջատված դրության մեջ: Նրա դաշնակիցները՝ ֆաշիստական Գերմանիան և Իտալիան, այսպես կոչված «հակակոմինտերնական» պայմանագրի համաձայն, անկարող են Ճապոնիային ռազմական օգնություն ցույց տալ այն չափով, վոր չափով նրանք կտային, յեթե կապված չլինեյին իրենց ինտերվենցիայով Իսպանիայում. Նրանք հազիվ թե կարողանան տալ նրան պատերազմական վարկեր, վորովհետև իրենք էլ իրենց սիրելի դաշնակցից վոչ պակաս տուժում են ֆինանսական դժվարություններից: Իսկ չինական ժողովրդի պայքարն ագրեսորի և Արևելքում պատերազմ հրահրողների դեմ, ինչպես և իսպանական ժողովրդի պայքարը գերմանական և իտալական ֆաշիզմի դեմ, հանդիսանում է վոչ միայն իր ազգային գոյության և ազատության պաշտպանության գործը, այլ և ամբողջ առաջավոր և պրոգրեսիվ մարդկության պայքարի բաղադրիչ մասը՝ ընդդեմ ֆաշիզմի և պատերազմի, հանուն դեմոկրատիայի և խաղաղության: Միջազգային պրոլետարիատի և բոլոր ազնիվ, խաղաղասեր ու դեմոկրատական ուժերի համերաշխությունն ու համակրանքը չինական ժողովրդի կողմն է:

Հետևաբար, Չինաստանի վոչ ներքին և վոչ էլ միջազգային դրությունը չի կարող արդարացնել «չդիմադրելու թեորիայի» կողմնակիցների պնդումն այն մասին, թե Չինաստանն անկարող է ճապոնական ագրեսիային զինված դիմադրություն ցույց տալ:

Սակայն այստեղից բոլորովին չի հետևում, վոր չինական ժողովրդի պայքարը ճապոնական ագրեսորի դեմ հանդիսանում է թեթև գործ, կամ վոր Չինաստանի հաղթանակը նախապես ապահովված է: Չինական ժողովրդի զինված պայքարն ազգային անկախությունը պահպանելու համար դեմ է առնում հսկայական թուլությունների և դժվարությունների, վորոնց հաղթահարումը պահանջում է նրանից մեծամեծ ջանքեր:

Առաջին հիմնական դժվարությունն այն է, վոր Չինաստանի ազգային ուժերը դեռ չեն կազմակերպված յեվ համախմբված լինելու: Թեպետ վերջերս, շնորհիվ կոմունիստների և ժողովրդական մասսաների, ինչպես և գոմինդանի մեջ գտնված պրոգրեսիվ տարրերի անդադրում պայքարի, յերկրում դադարել է ներքին պատերազմը և սկսվել է բոլոր հակաճապոնական ազգային ուժերի խաղաղ համախմբման պրոցեսը, բայց այդ համախմբման իրականացումը դեռ ևս հեռու է այն բանից, վորն անհրաժեշտ է արտաքին թշնամուն հաջողությամբ զինված դիմադրություն ցույց տալու համար: Բազմամիլիոն չինական ժողովուրդը, վորը կազմում է ամբողջ մարդկության 1/5-ը,—անպարտելի ուժ է միայն այն ժամանակ, յերբ այս ժողովուրդը կմիանա յեվ կկազմակերպվի, վորպես մի միասնական անխորտակելի ազգային հզորություն:



Յերկրորդ հիմնական դժվարությունն առաջանում է Չինաստանի ռազմա-տեխնիկական հետամնացությունից: Թեպետ առաջ հափշտակիչների դեմ մղած կռիվներում չինական անձնազոհ և դիմացկուն զորքերը քանակով մի քանի անգամ ավելի յեն Ճապոնիայի կանոնավոր հետևակ զորամասերից, սակայն ռազմատեխնիկական սարքավորման տեսակետից, նրանք իրենց թշնամուց շատ հետ են մնում: Չինաստանի ավիացիան, չնայած ինքնաթիռների քանակի բավականաչափ բազմանալուն, նոր կադրերի պատրաստելուն, օդաչուների հերոսությանն ու վարպետությանը, այնուամենայնիվ իրենից ներկայացնում է վոչ բավականաչափ ուժ:

Չինաստանի ռազմածովային նավատորմիղը թե քանակական և թե վորակական տեսակետից թույլ է: Ծովային ուժերի ամրացումը և ուժեղացումը յերկրային պաշտպանության համար—չինական ժողովրդի և Նանկինի կառավարության ամենաանհետաձգելի մարտական խնդիրներից մեկն է: Քիմիական պատերազմի չինական զորքն ու բնակչությունը համարյա պատրաստ չեն, իսկ մարդակերները—ճապոնական ֆաշիստները—արդեն սկսում են չինական ժողովրդի դեմ թունավոր նյութեր կիրառել:

Վերջապես ռազմատեխնիկական սարքավորման թուլության կապակցությամբ և ժամանակակից պատերազմում փորձառության բացակայության հետևանքով չինական զորքերը անհրաժեշտ քանակությամբ ռազմատեխնիկական կադրեր չունեն: Թեպետ Իսպանական հանրապետության փորձը ցույց տվեց, վոր նման թուլությունները և դժվարությունները կարելի յե հաղթահարել պատերազմի ընթացքում, բայց նրանք իրենց զգալ կտան, մանավանդ պատերազմի առաջին շրջանում:

Յերրորդ հիմնական դժվարությունը հակաճապոնական պայքարում այն է, վոր ճապոնական իմպերիալիզմը լրտեսության, դիվերսիայի, խաբեբայության, կաշառքի և ինտրիգների մեծ փորձառություն ունի ճնշված ազգերի դեմ: Ճապոնիայի ռազմա-քաղաքական հետախուզությունը («հատուկ ծառայության բաժիններ») տասնյակ տարիների ընթացքում կարողացավ տարածել յուր բազմաթիվ գործակալներին՝ լրտեսներին, դիվերսանտներին, տեռորիստներին և պրովոկատորներին Չինաստանի բոլոր քիչ թե շատ կարևոր ռազմա-ստրատեգիական ու քաղաքական կենտրոնում և կազմակերպություններում, վորոնց թվում նաև բարձրագույն քաղաքական և զինվորական գործիչների վորոշ մասի մեջ: Այդ ագենտներից շատերը դիտավորյալ կերպով առայժմ ցույց չեն տալիս իրենց ակտիվ գործունեությունը, սպասելով հարմար

ժամանակի՝ ամենակարևոր շրջաններին վճռական հարված հասցնելու համար։

Վերջապես, չորրորդ հիմնական դժվարությունը, որը բխում է տնտեսական հետամնացությունից, ֆինանսական աղքատությունից և յերկրի հաղորդակցության գծերի չափազանց սահմանափակ լինելուց, այն է, որ չինական զորքերը պետք է զգան զենքի, հանդերձանքի և պարենի պակասություն, ինչպես նաև դժվարություններ կրեն ու ընդհատումներ ունենան զորքերի տեղափոխման, նրանց արագ և յուրաժամ գործողությունների ու մանյովրների ապահովելու խնդիրներում և այլն։

Այո, կիսագաղութային Չինաստանի դժվարությունները և թույլ կողմերը իմպերիալիստական Ճապոնիայի հետ ունեցած զինված մարտում բազմաթիվ են և չափազանց լուրջ։ Յեվ այդ պատճառով էլ կոմունիստների և ամբողջ չինական ժողովրդի առաջ դրված խնդիրն այն է, որ միջոցներ և ուժություն գտնեն նրանց հաղթահարելու համար։

Այդ դժվարություններից ու թուլություններից վախենալը կլիներ հանցանք ժողովրդի առաջ։ Այսօր ամբողջ չինական ժողովրդի առաջ, բացառությամբ ճապոնական ագենտների, ազգային դավաճանների և անուղղելի վախկոտների ու շաղակրատների, էլ այն մասին հարց չի դրվում, թե «Չինաստանը պարտական է և կարող է արդյոք ճապոնական ագրեսիային զինված դիմադրություն ցույց տալ»։ Այժմ Չինաստանի առաջ հարցը դրված է միայն այն մասին, թե ինչպես կազմակերպել այդ զինված դիմադրությունը և ինչպես ապահովել չինական ժողովրդի հաղթանակը այս ծանր, բայց պանծալի ազգային-ազատագրական պայքարում։

## ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՉԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԶԻՆՎԱԾ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՊԱՀՈՎԵԼ ՆՐԱ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Ոտարերկրյա և չինական մամուլի տեղեկությունների համաձայն, սկսած Լյուկոուցզյան դեպքերից մինչև ճապոնական զորքերի պատերազմական գործողությունների սկիզբը Շանհայում, այսինքն մինչև օգոստոսի 14-ը, գոմինդանը և Նանկինի կենտրոնական կառավարությունը, ճապոնական նոր ագրեսիային դիմադրելու նպատակով, ձեռնարկեցին հետևյալ միջոցառումները.

1) Պաշտպանությունն ուժեղացնելու և 29-րդ զորաբանակին օգնելու համար զորահավաքված է մոտավորապես 100—150 հազար մարդ Խեբեյում, Չախարում և Շանդունում։



2) Հրավիրված է ազգային պաշտպանության առաջին կոնֆերանսը։ 3) Հրապարակված է հրաման գեներալ Չժան Սյուելյանին (մանջուրական զորաբանակի լիդեր) պաշտոնում վերականգնելու մասին, և պատրաստակամություն է հայտնված հրամանատարի պաշտոնում վերականգնելու գեներալ Ցայ-Տին-կային (19-րդ բանակի հրամանատար)։ 4) Համաժողովրդական բողոքի ճնշման տակ, Սուն Ցին-լինի գլխավորությամբ, ազատված են «ազգային փրկության համաչինական ասոցիացիայի» յոթը լիդերները։ 5) Ռազմական պաշտպանության ուղղությամբ սկսված են աշխատանքները Շանհայի, Նանկինի, Ուխանի և ուրիշ ռայոններում։ 6) Նշանակված են ռազմաճակատների հրամանատարներ՝ Չան-Կայ-շին—գլխավոր հրամանատար Նանկինի բոլոր զորքերի և Բեյպին-Խանկոու յերկաթգծի վրա գտնված ռազմաճակատի I-ին զորաբանակի հրամանատար. Ֆըն Յույ-Սյանը—Տյանցզին-Պուկոու յերկաթգծի վրա գտնված ռազմաճակատի II-րդ զորաբանակի հրամանատար. Յան Սի-Շանը՝ Շանսի-Սույյուան ռազմաճակատի III-րդ բանակի հրամանատար։

Պետք է խոստովանել, որ թեպետ գոմինդանի և Նանկինի կառավարության այս միջոցառումները դեռ չեն համապատասխանում իրերի դրության պահանջներին և չեն բավարարում յերկրի պաշտպանության կարիքներին, այնուամենայնիվ համեմատած գոմինդանի և Նանկինի կառավարության վոչ այնքան հեռու անցյալում ունեցած դիրքի և քաղաքականության հետ, այս միջոցառումները հանդիսանում են մեծ քայլ դեպի առաջ։ Գոմինդանն ու Նանկինի կառավարությունը ճապոնական ագրեսիայի դեմ ավելի լուրջ զինված դիմադրություն սկսեցին միայն ճապոնական հարձակումից հետո Շանհայ-Նանկինյան ռայոնի վրա։ Կկարողանա՞ն արդյոք Գոմինդանն ու Նանկինի կառավարությունն իրենց ներկա ղեկավար կազմով հաջորդաբար մինչև հաղթական յելքը կազմակերպել այդ դիմադրությունը, այդ ցույց կտա մոտիկ ապագան։ Մենք, կոմունիստներս, ջերմագին ցանկանում ենք, որ Գոմինդանն ու Նանկինի կառավարությունը, վերջնականապես հաղթահարելով ճապոնասեր տարրերի դիմադրությունը, մեզ և ամբողջ չինական ժողովրդի հետ միասին մինչև հաղթական յելքը հասցնեն ճապոնական հափշտակիչների դեմ մղվող զինված պայքարը։ Չինաստանի կոմունիստական կուսակցությունը, իր կողմից, խորը գիտակցելով իր պատասխանատվությունը բանվոր դասակարգի և ամբողջ չինական ժողովրդի ճակատագրի հանդեպ, համառորեն պնդում է 1931 թվի մանջուրական դեպքերի ամենասկզբից առաջադրած լոզունգը՝ «Քշել Չինաստանից ճապոնական իմպերիալիզմը» և քայլ առ քայլ, սկսած 1935 թվի օգոստոսի մանիֆեստից և վերջացած Չինաստանի հյուսիսային մասի դեպքերի առթիվ հրապարակ-

ված վերջին դեկլարացիաներով, առաջադրել է կոնկրետ և միասնական հակաճապոնական ազգային ճակատ ստեղծելու քաղաքականության հիման վրա մշակված առաջարկներ, որոնց ռեալացմամբ չինական ժողովուրդը կկարողանա ոչ միայն ցույց տալ լուրջ զինված դիմադրություն ճապոնական ագրեսորին, այլև հաղթանակ նվաճել իր համար։

Ինչպիսի՞ կոնկրետ առաջարկներ և պահանջներ են առաջադրում Չինաստանի կոմունիստներն իրենց դեկլարացիաներում և դիմումներում։

Առաջինը, «Ճապոնիային դիմադրելու և հայրենիքի փրկության համար, Չինաստանի բոլոր հակաճապոնական կուսակցությունների և խմբավորումների համագործակցությունը՝ գոմինդանի և կոմկուսակցության համագործակցության հիման վրա»։

Ընդհանուր թշնամու դեմ ընդհանուր պայքար մղելու քաղաքական համաձայնության վրա հիմնված՝ Չինաստանի բոլոր կուսակցությունների և խմբերի մեջ համագործակցություն հաստատելը նախատեսնում է համաձայնության մասնակցողների բոլորի համար (գոմինդան, կոմկուսակցություն, և ուրիշ քաղաքական կազմակերպություններ), պահպանել նրանց քաղաքական և կազմակերպչական ինքնուրույնությունը։ Ճիշտ է, տարբերկրյա թերթերի վերջին տեղեկությունների համաձայն, գոմինդանի և կոմկուսակցության համագործակցության գործը արագ առաջ է ընթանում։ — Եթե սա ճիշտ է, այն ժամանակ ամեն կերպ այդ պետք է ողջունել։ Սակայն ամբողջ չինական ժողովրդի շահերի տեսակետից հարկավոր է գոմինդանի միջանի ղեկավարներին անկեղծորեն խորհուրդ տալ վերանայելու հրաժարվել իրենց սխալ փորձից, այնե՝ գոմինդանի յեվ ՉԿԿ-ի համագործակցությունը վերածել կոմկուսակցությունը քաղաքականապես յեվ կազմակերպչորեն յերբեք կլանելու գոմինդանին։ Նրանց անհրաժեշտ է նմանապես հրաժարվել կոմկուսակցությունից յեվ Նանկինի գոմինդանից բացի ուրիշ հակաճապոնական քաղաքական խմբավորումներ յեվ կազմակերպություններ չճանաչելու սխալ դիրքից, հրաժարվել այդ խմբավորումների յեվ կազմակերպությունների հետ միասնական ճակատ հաստատելու անհրաժեշտությունը չճանաչելուց յեվ նրանց այդ համագործակցությունը գոմինդանի յեվ Նանկինի կառավարությանը բաժին յե բերելու փորձից։ Նանկինի միջանի ղեկավարների յերկրի և ժողովրդի կենսական հարցերի լուծման նկատմամբ ունեցած այսպիսի վերաբերմունքը միայն դժվարացնում և հետաձգում է Չինաստանի բոլոր ժողովրդական ուժերից միասնական հակաճապոնական ազգային ֆրոնտ ստեղծելու գործը։ Նրանք հենց դրանով կամա-ակամա ճապոնական ագրեսորին իսկական զինված



դիմադրություն կազմակերպելու գործում խոչընդոտ են հանդիսանում և վերջինիս ջրաղացին ջուր են լցնում։

Երկրորդ, «Ստեղծել ազգային պաշտպանության համաչինական դեմոկրատիկական կառավարություն և միասնական համաչինական դեմոկրատիկական հանրապետություն»։ Այժմ տեղեկություն կա, որ գոմինդանը մոտիկ ժամանակամիջոցում մտադիր է այդ ուղղությամբ վերակազմել Նանկինի կառավարությունը։ Սա շատ լավ է, և պետք է ողջունել միայն։ Սակայն այս գործն արագացնելու համար անհրաժեշտ է մինչև վերջ ջարդ ու փշուր անել զանազան զրպարտական լեգենդներն ու սխալ դատողությունները։ Նախ և առաջ միանգամայն ճիշտ հիմնավորված չեն ճապոնասեր տարրերի տարածած այն հերյուրանքները, որ ազգային պաշտպանության համաչինական կառավարություն ստեղծելու լոզունգը իբրև թե նշանակում է տապալել գոյություն ունեցող Նանկինի կենտրոնական կառավարությունը և նրա տեղը ստեղծել բոլորովին նոր կառավարություն։ Սա զրպարտություն է և պրովոկացիա։ Ներկայումս Նանկինի կառավարության տապալմամբ շահագրգռված են միայն ճապոնական ագրեսորը և նրա ագենտները։

Մենք, չին կոմունիստներս, բացեիբաց հայտարարում ենք, որ պաշտպանում ենք գոմինդանին և Նանկինի կառավարությանը և նրանց հետ միասին, ձեռք ձեռքի տված, պետք է կռվենք ճապոնական իմպերիալիզմի դեմ։

Սխալ է և սոֆիստիկական միջանի անուղղելի չարակամների այն պնդումը, թե ազգային պաշտպանության համաչինական կառավարություն ստեղծելու լոզունգը նշանակում է ստեղծել այնպիսի կառավարություն, որն անպայման պիտի անվանի իրեն ազգային պաշտպանության համաչինական կառավարություն, հակառակ դեպքում նա իբր թե չի կարող այդպիսի կառավարություն լինել։ Ֆորմալիստներ։ Չէ որ գործն անվան մեջ չէ, այլ էության։ Սխալ է նմանապես նրանց պնդումը, որոնք ասում են, թե գոյություն ունեցող Նանկինի կառավարությունը վաղուց արդեն ազգային պաշտպանության համաչինական կառավարություն է հանդիսանում։ Ոչ։ Նանկինի կառավարությունը միայն այժմ ժամանակի կերպով սկսել է կատարել ազգային պաշտպանության խնդիրները։ Սակայն նա դեռ չի ներկայանում ազգային պաշտպանության իսկական համաչինական կառավարություն, ինչպես այդ պահանջում են պատերազմական իրադրությունը և միասնական հակաճապոնական ազգային ֆրոնտի բոլոր կողմնակիցները։

Նանկինի ազգային կառավարությունը պարտական է և կարող է դառնալ ազգային պաշտպանության իսկական համաչինական կառավարություն, եթե փոխի իր քաղաքական

նությունը դեպի ազգային անկախության համար մղվող վճռական պայքարի կողմը, դեմոկրատիզացիայի յենթարկի ռեժիմը և, վտարելով կառավարության միջից բոլոր ճապոնասեր տարրերին, բարելավի մասսաների նյութական դրությունը, ներգրավի կառավարության մեջ իսկական հեղինակավոր, մարտունակ հակաճապոնական գործիչներ համապատասխան կուսակցություններից, խմբավորումներից և կազմակերպություններից, ըստ նպատակահարմարության և վերջինների ցանկության։ Միայն այսպիսի համաչինական հեղինակավոր և մարտունակ կառավարությունը, հրավիրելով համաչինական պարլամենտ, որը կազմված լինի ընդհանուր ընտրական իրավունքի և ժողովրդին ընդհանուր դեմոկրատական ազատություններ տալու հիման վրա, կարող է իսկապես կենսագործել ազգային պաշտպանության պատասխանատու, ամենադժվարին, ամենաբարդ խնդիրը, որը դրել է նրա վրա 400 միլիոնանոց ժողովուրդը։ Միայն այսպիսի ազգային պաշտպանության համաչինական կառավարությունը կարող է ապահովել ամբողջ յերկրի բոլոր ռազմական, մարդկային և տնտեսական ուժերի ընդհանուր զորահավաքը, չինական ամբողջ ժողովրդի սրբազան զինված պայքարի համար՝ ճապոնական ագրեսորի դեմ։

Անհապաղ ազատել բոլոր քաղաքական բանտարկյալներին, լիկվիդացիայի յենթարկել բոլոր հակաժողովրդական, հակադեմոկրատական օրենքները, հետագայում ուղղել ազգային ժողով հրավիրելու օրենքները և պայմանները, արմատապես փոխել չինական հանրապետության սահմանադրության նախագիծը, անհապաղ մտցնել լայն դեմոկրատիկական ազատություն բոլոր քաղաքացիների համար, բացառությամբ ազգային մատնիչների և ճապոնական ագենտների,—մեկ խոսքով, Չինաստանը դարձնել իսկական միասնական համաչինական հանրապետություն։—Այս բոլորը արագ և եֆեկտիվ կերպով կօջակցի ժողովրդի և կառավարության մեջ փոխադարձ հավատարմության հաստատվելուն և հենց դրանով շատ կուժեղացնի և կամրապնդի Չինաստանի ազգային պաշտպանության հզորությունը։

Յերրորդ. «Բոլոր զինվորական մասերի ընդհանուր զորահավաք անել և համաչինական միացյալ հակաճապոնական բանակ ստեղծել»։ Ճապոնական ագրեսորի դեմ զինված պայքարի հաջողությունը պահանջում է Չինաստանի բոլոր զինվորական մասերի ընդհանուր զորահավաք, իսկ դրա համար անհրաժեշտ է ստեղծել համաչինական միացյալ հակաճապոնական բանակ՝ միացնելով Չինաստանի բոլոր զինված ուժերը, այսինքն բոլոր կենտրոնական նանկինյան բանակները, բոլոր գավառական բանակները, հակաճապոնական ժողովրդական Կարմիր բանակը, մանջուրական հակաճապոնական ժողովրդական բանակները և այլն—



մի հրամանատարությամբ, մի կարգապահությամբ, մի մատակարարությամբ և զինվածությամբ, մի պատերազմական պլանով միացյալ պատերազմական գործողությունների համար ընդդեմ ընդհանուր թշնամու։ Նանկինի կառավարությունը, Չան Կայշին, վորոշ չափով ձեռնամուխ է լինում ստեղծել այդպիսի բանակ։ Մենք, ի հարկե, այդ քայլը միանգամայն վողջունում ենք։ Կարմիր Բանակն իր հրամանատարական և քաղաքական կազմով, Չինաստանի կոմկուսակցության Կ. Կ. ղեկավարությամբ, քանիցս վոչ թե խոսքով, այլ և գործով անկեղծորեն հաստատել է իր պատրաստակամությունը՝ դարձնել իրեն համաչինական միասնական ազգային հեղափոխական բանակի կազմող մասը։ Բայց միասնական համաչինական բանակ ստեղծելը շատ յերկար ձգձգվում էր շնորհիվ այն բանի, վոր նանկինյան բանակների միքանի ղեկավարները և Նանկինի միքանի քաղաքական գործիչները վերջին տարիներում, յերբ արդեն հիմնականում դադարած էր փոխադարձ պայքարը, փորձում էին ոգտագործել միասնական ազգային բանակ կազմելու լոզունգը՝ հակաճապոնական ժողովրդական Կարմիր բանակի պատերազմական զորությունը թուլացնելու և փոքրացնելու համար։ Օրինակ, պահանջներ էին առաջադրված՝ հեռացնել ամենահայտնի և տաղանդավոր զորավարներ և Կարմիր բանակն ստեղծող ընկերներին—Ջժու Դեյին և Մաո Ցզե-դունին, փոքրացնել և կրճատել հակաճապոնական ժողովրդական Կարմիր բանակի քանակը, Կարմիր բանակի բոլոր դիվիզիաների շտաբների բոլոր պետերին հանել և նրանց տեղը ուրիշներին դնել և այլն։ Միթե այս բոլորը համապատասխանում է Ճապոնիայի դեմ պայքարելու և միասնական ազգային բանակ ստեղծելու ընդհանուր շահերին։ Ըստ վերջին տեղեկությունների, Նանկինի կառավարությունը և գոմինդանն արդեն հրաժարվել են իրենց միքանի պահանջներից և Կարմիր բանակը, միասնական չինական բանակ ստեղծելու և հակաճապոնական ռազմաճակատներում ընդհանուր պայքարն արագացնելու նպատակով, արդեն ընդունել է պաշտոնապես Նանկինից՝ իրեն հրամանատարների կազմը նշանակելու և Կարմիր բանակին ազգային հեղափոխական բանակի մասը վերանվանվելու հրամանները։ Սա միասնական համաչինական բանակ ստեղծելու տեսակետից խոշոր քայլ է դեպի առաջ։

Միասնական ժողովրդական հեղափոխական բանակ ստեղծելուն լուրջ խոչընդոտ է հանդիսանում նաև այն, վոր Նանկինի գործիչների մի մասը, հանուն ազգային-հեղափոխական բանակի ստեղծման, փորձեց տեղական զորքերի ռազմական ուժը թուլացնել և միաժամանակ տեղական զինվորական լիդերների մի մասը, ըստ հին սովորության, իրենց զորքերը համարում են ինչպես իրենց «սեփական կապիտալ», իրար չկամենալով մտցնել

իրենց զինվորական ուժերը միասնական համաչինական հակաճապոնական բանակի մեջ: Պետք է բացարձակապես ցույց տալ տեղերի և կենտրոնի այդպիսի զինվորական գործիչներին, վոր այժմ չինական բանակի բոլոր մարտիկների մեջ ավելի ու ավելի աճում է ազգային ինքնագիտակցությունը: Նրանք հասկանում են, վոր իրենց սրբազան պարտականությունը բնավ «իրենց գեներալների» կույր հպատակություն տալը չէ, այլ յերկրի և ժողովրդի պաշտպանության պանծալի խնդրի գիտակցորեն կատարելն է: Այդ կապակցությամբ, վերջին դեպքերի ժամանակ, բնորոշ է 29 րդ բանակի 38-րդ դիվիզիայի վարմունքը, յերբ նրա հրամանատար Զժան Ցզը-չունը, յենթարկվելով ճապոնասերների կողմից դրդված պաշտոնյա, մերժեց իր զորամասի սպաների ու զինվորների խնդիրքը՝ հրաման արձակելու դիվիզիային, վորպեսզի ճապոնական զորքերին զինված դիմադրություն ցույց տրվի: Հակառակ իր հրամանատարի կամքին, 38 րդ դիվիզիան, լավագույն սպաների հրամանատարությամբ, ամբողջովին ինքնակամ դուրս յեկավ օգնելու 37-րդ դիվիզիային և պաշտպանելու Բեյպին-Տյանցզինյան շրջանը ճապոնական ագրեսորի դեմ:

Այժմ Չինաստանի բոլոր զինվորական գործիչների առաջման լավագույն ժամանակն է: Ներկա պայմաններում, յեթե վորևէ մեկը ցույց տա իրեն իբրև դավաճան, վախկոտ, դիմադրություն ցուցաբերի ճապոնացիների դեմ դուրս գալուն, այդպիսին իբրև անարժան ռազմական գործիչ, իբրև իր հայրենիքի անարժան զավակը շրջապատված կլինեք ընդհանուր արհամարհանքով:

Չորրորդ, «Ամբողջ չինական ժողովրդի ընդհանուր զորահավաք»: Ճապոնական իմպերիալիզմի հետ իսկական հաջող զինված պայքարի համար մենակ Չինաստանի զինվորական ուժը շատ և շատ անբավական է. միացյալ պայքարի և ընդհանուր նպատակի հասնելու համար հարկավոր է ընդհանուր զորահավաք ամբողջ աշխատունակ չինական ժողովրդի, բոլոր տղամարդկանց և կանանց, փոքրից մինչև մեծը: Այսօր մեր ամբողջ ժողովրդին զորահավաքի յենթարկելու դիրեկտիվը պիտի լինի մեր կուսակցության ոգոստոսի մեկի (1935 թ.) դիմումի մեջ արտահայտած դիրքավորումը՝ «Ով շատ փող ունի,—թող տա իր փողերը. ով շատ զենք ունի, թող տա իր զենքը, ով հաց ու բրինձ ունի,—թող տա իր հացն ու բրինձը. ով լավ առողջություն ունի,—թող չխնայի իր ուժն ու յեռանդը. ով մասնագիտություն ունի,—թող ոգտագործի իր գիտությունը: Թող այսպիսով մոբիլիզացիայի յենթարկվի ամբողջ ժողովուրդը»:

Հինգերորդ, «Ամբողջ չինական ժողովրդի ընդհանուր զինավառումը»: Ճապոնական ոդային, հետևակ և ծովային ուժերի ռազմական գործողություններն արդեն ամենայն պարզությամբ



ցույց են տալիս, վոր ժամանակակից պատերազմում թիկունքը ռազմաճակատից քիչ է տարբերվում: Դրա համար մեզ հարկավոր է զինել մեր ժողովրդին զենքի բոլոր գոյություն ունեցող տեսակներով, վորպեսզի մեր ժողովուրդը կարողանա ամեն տեղ և ամեն ժամանակ վոչ միայն զենքը ձեռքին պաշտպանվել ճապոնացիների և նրանց ագենտների անակնկալ գրոհներից, այլև կարող լինի նաև ռազմաճակատներում անհրաժեշտ ոգնություն ցույց տալ մեր զորքերին և վարել պարտիզանական պատերազմ ու դիվերսիոն աշխատանք հակառակորդի թիկունքում, նրա թևերում և այլն: Հիմա Նանկինի կառավարությունը և տեղական իշխանություններն առաջին հերթին պարտական են զինել միլիոնավոր բանվորներին և աշխատավորներին Շանհայում, Տյանցզինում, Բեյպինում, Խանչժոույում, Ուխանում, Ցինդաոյում և յերկրի ուրիշ բոլոր խոշոր քաղաքներում, ինչպես նաև Ցզյանսու-Չժեցզյանի և Ֆուցզյան-Ցզյանսիի շրջանների հյուսիսային գավառների գյուղացիական մասսաներին: Միայն զինված ժողովրդական մասսաների ոժանդակ գործողությունների զուգորդումը՝ ընդհանուր ռազմական պլանով գործող զորքի պատերազմական գործողությունների հետ՝ կապահովի ճապոնական հափշտակիչների հաջող վտարումը Չինաստանից:

Վեցերորդ, «Յերկրի ամբողջ տնտեսությունը ընդհանուր մոբիլիզացիա անել և ազգային պաշտպանության տնտեսական քաղաքականություն տանել»: Յուրաքանչյուրի համար պարզ է, թե ինչպիսի խոշոր նշանակություն ունի ժամանակակից պատերազմում յերկրի տնտեսական, ֆինանսական և հումույթային ռեսուրսների ընդհանուր մոբիլիզացիան: Առանձնապես սուր է դրված այս խնդիրը Չինաստանում տնտեսապես հետամնաց մի յերկրում, վորն ստիպված է ժամանակի տեսակետից՝ յերկարատև, ու մասշտաբի տեսակետից՝ լայնածավալ պատերազմ մղել ճապոնական իմպերիալիզմի դեմ: Այս տեսակետից չին կոմունիստներին պետք կլինի դեռ շատ և լուրջ աշխատել մեր դաշնակցի—գոմինդանի հետ՝— յերկրի ամբողջ տնտեսությունը մոբիլիզացիա անելու և կազմակերպելու համար, համապատասխան ազգային պաշտպանության պահանջներին և պայմաններին:

Յոթերորդ, «Ապահովել ու բարվոքել ժողովրդական մասսաների նյութական դրությունը»: Չինաստանի ժողովրդական մասսաները ապրում են աղքատության մեջ, ամեն տարի միլիոններով մահանում են սովից, հեղեղից, յերաշտից և ուրիշ աղետներից: Վորպես վնասակար և անհիմն տեսություն, պետք է դեն շպրտել շաղակրատությունն այն մասին, վոր իբր թե պատերազմի ժամանակ ժողովրդական մասսաների կենսական մակարդակի վորևէ ապահովման ու բարելավման մասին խոսք չի կարող լինել: Այո, պատերազմի ժամանակ դժվար է ապահովել և բարե-

լավել մասսաների նյութական դրությունը. Համազգային պաշտպանողական պայքարի ժամանակ մարդիկ պարտական են շատ զոհեր տալ։ Սակայն, համազգային զինված պայքարի ժամանակ աշխատավոր մասսաների գոյությունը պահպանելու և նրանց միանգամայն անտանելի դրությունը բարելավելու համար, կենսական տարրական պայմանների ապահովումը վոչ միայն հնարավոր է, այլ հենց այդ պայքարի շահի տեսակետից բացարձակապես անհրաժեշտ է։

Այժմ հարյուր հազարավոր չինական բանվորներ և ծառայողներ, վորոնք առաջ աշխատում էին ճապոնական ձեռնարկություններում, ի նշան բոյկոտի և բողոքի ազգային թշնամու դեմ, թողնում են իրենց աշխատանքի վայրերը։ Սակայն գործազրկությունը—նշանակում է սով։ Միթե կարելի չէ այս հարյուր հազարավոր առաջավոր մարտիկների կենսական գոյությունն ապահովել։ Իհարկե, կարելի է։ Այս տարի Չինաստանի շատ շրջաններում գյուղացիներն էլի տանջվում են յերաշտից և անբերրիությունից։ Միթե կարելի չէ սովահար և աղքատ գյուղացիներին տարրական օգնություն ցույց տալ։ Իհարկե, կարելի է։ Անհրաժեշտ է նաև սիստեմատիկ օգնություն ցույց տալ գործազուրկ, աղքատացած արհեստավորների բազմամիլիոն մասսաներին և այլն։

Ութերորդ, «ազգային պաշտպանողական լուսավորության և գործազուրկ ու անգրագետ յերիտասարդությանն օգնելու քաղաքականություն տանել»։ Չինաստանում տասնյակ միլիոն բանվորներ և գյուղացիներ անգրագետ են, իսկ լուսավորության սիստեմը բոլորովին չի բավարարում իրենց՝ վոչ սովորողների և վոչ պետության պահանջներին։ Այդ պատճառով Չինաստանում վերջին տարիները յերիտասարդության միջև առաջացել է մեծ մասսայական շարժում, լավագույն հայտնի գիտական և լուսավորական գործիչների գլխավորությամբ, ազգային-պաշտպանողական լուսավորության և գործազուրկ ու անգրագետ յերիտասարդության օգնության քաղաքականություն տանելու ուղղությամբ։ Այդ շարժման հիմնական բովանդակությունը հանգում է հետևյալին՝ 1) բարելավել լուսավորական սիստեմը՝ յերիտասարդության մեջ ազգային գիտակցությունը և, հայրենիքը փրկելու համար, արտաքին թշնամու դեմ պայքարելու նրա վճռականությունը բարձրացնելու վոգով. 2) վերակազմակերպել լուսավորության սիստեմը՝ ազգային պաշտպանության և զանազան մասնագետներ պատրաստելու տեսանկյունից. 3) խոսքի և ուսման ազատություն տալ ու պայքար մղել՝ յերիտասարդության հարկադրաբար հակաժողովրդական ու հակազգային վոգով տարվող դաստիարակման դեմ. 4) յերիտասարդության և ուսանողության ռազմական դաստիարակում. 5) դպրոցականներին աշխատանք տալ ու օգնել սովորողներին և այլն։



Չինաստանի կոմկուսակցությունն ամբողջովին պաշտպանում է յերիտասարդության և չինական ինտելիգենցիայի լավագույն մասի այդ շարժումը և նույն պահանջները մտցրել է Ճապոնիային դիմադրելու և հայրենիքը փրկելու միասնական ազգային ռազմաճակատի իր ընդհանուր ծրագրի մեջ։

Իններորդ, «բռնագրավել ճապոնական ագրեսորի և նրա ագենտների ամբողջ գույքը և վոչնչացնել ճապոնական լրտեսներին ու ազգային դավաճաններին»։ Ճապոնական ագրեսորի և նրա ագենտների ամբողջ գույքի բռնագրավումը մեր թշնամիներին կզրկի Չինաստանի մեջ ունեցած տնտեսական բազայից։ Բռնագրավումից ստացված միջոցները կծածկեն պատերազմական ծախսերի մի մասը և կգործադրվեն հակաճապոնական մարտիկներին և նրանց ընտանիքներին օգնելու համար։ Պետական, զինվորական ու գոմինդանի կուսակցական ապարատի և կենտրոնում ու տեղերում գտնված ուրիշ կազմակերպությունների կեղտոտումը ճապոնական ագենտներով հանրածանոթ փաստ է։ Յեթե գոմինդանը և Նանկինի կառավարությունն իսկապես մտել են զինված պայքար մղելու ճապոնական ագրեսորի դեմ, ապա չպետք է հանդուրժեն, վոր իրենց ապարատն, առանձնապես նրա առավելագույն պատասխանատու օղակները, կեղտոտված լինեն ճապոնական ագենտներով։ Իսկ յեթե այդ այդպես է, ապա ինչու տրոցկիստները—չինական ժողովրդի այդ ափաշկարա ու ստոր դավաճանները—մինչև այժմ Շանհայում, Նանկինում, Սիանում և ուրիշ տեղերում ճապոնական հետախույզի առաջադրանքով տանում են ամենաստոր քայքայիչ, դիվերսիոն և լրտեսական աշխատանք։ Չէ՞ վոր չինական տրոցկիստների ծառայությունը ճապոնական հետախուզության մեջ հանրածանոթ և անվիճելի փաստ է։

Միթե հակահեղափոխական տրոցկիստական լոզունգն այն մասին, թե Չինաստանի գլխավոր թշնամին ճապոնական իմպերիալիզմը չէ, այլ Չինաստանի կոմունիստական կուսակցությունն է և «ազգային փրկության համաչինական ասոցիացիան»,—ուղղակի ճապոնական հետախուզության թելադրությունը չէ։ Միթե տրոցկիստական այս լոզունգը «դաշինք Ճապոնիայի հետ՝ կոմկուսակցության և Չան-Կայ շիի դեմ պայքար մղելու համար» ճապոնական ագրեսորի՝ կոմկուսակցությունն ու գոմինդանը վոչընչացնելու ուղղակի կոչը չէ։ Միթե տրոցկիստական «Չինաստանի ազգային հեղափոխական պատերազմը մղել վոչ թե միայն ճապոնական իմպերիալիզմի դեմ, այլ միաժամանակ բոլոր իմպերիալիստական պետությունների դեմ» դիրքավորումը Չինաստանին Յեվրոպայից և Ամերիկայից մեկուսացնելու համար չէ ուղղված, վորպեսզի ոժանդակել ճապոնական հափշտակիչներին Չինաստանում։ Միթե իմպերիալիզմի դարաշրջանում ազգային-հեղափոխական պատերազմների անհնարինության մասին հայտնի հակալե-

նինյան թեորիայի տրոցկիստական պրոպագանդյան և ճապոնա-տրոցկիստական գործակալների կատաղի գրոհները չինական կոմ-կուսակցության՝ ազգային հեղափոխական պատերազմ ճապոնա-կան իմպերիալիզմի դեմ լոզունգի վրա,—«չդիմադրելու թեորիայի» քարոզների ճապոնական առաջադրանքի ուղղակի կատարումը չե՞ն Չինաստանում։ Մի՞թե տրոցկիստական «անհրաժեշտ է միաժա-մանակ քաղաքացիական կռիվ մղել ներքին թշնամու դեմ և ազ-գային-հեղափոխական կռիվ արտաքին թշնամու դեմ», ինչպես և «անկարելի ու անթույլատրելի յե կոմկուսակցության և՛ վոչ մի միասնական ճակատ գոմինդանի հետ» լոզունգի ցինիկ իրագոր-ծումը չի՞ ճապոնական քաղաքականության Չինաստանում՝ «Չի-նաստանը ին հաղթել իրենց չինացիների ձեռքով» և վոչ մի դեպ-քում թույլ չտալ, վոր Չինաստանի ազգային ուժերը միանան՝ ճապոնական ագրեսիայի դեմ ընդհանուր պայքար մղելու համար։ Լիովին իրավացի յեր հանգուցյալ ժողովրդական գրող Լու-Սյունը, յերբ հայտարարեց, վոր «ճապոնական իմպերիալիզմը միայն վող-ջունում է տրոցկիստների հայացքները Չինաստանում»։

Սիանի դեպքերի ժամանակ ճապոնա-տրոցկիստական գործա-կալությունը՝ բանդիտ Չժան—Մու-տաոյի գլխավորությամբ՝ ամեն կերպ աշխատում եր Նանկինի և Սիանի միջև պատերազմ հրահրել։ Այս իսկ գործակալությունը դրանից հետո սպանեց գեներալ Վան Ի - չժեյին՝ հայտնի ազգային հերոսին, վորը չինական բա-նակի բարձր հրամանատարական կազմից առաջինն եր, վոր բացար-ձակ ու ազնիվ կերպով միասնական հակաճապոնական ճակատ ստեղծման կոմկուսակցության ու Կարմիր բանակի հետ

Տրոցկիստները յուրեցս անարգված ոեննգատները՝ Աուան Պինի և Չժան Մու տայի գլխավորությամբ յուրաքանչյուր ամիս ստա-նում են Հյուսիսային Չինաստանում գտնվող ճապոնական հե-տախուզությունից 50 հազար դոլլար՝ այսպես կոչված Նոր կու-սակցություն կազմակերպելու և իրենց վնասարարական աշխա-տանքներն անցկացնելու համար։ Տրոցկիստների ներկայացուցիչ Չժան Մու տաոն մտցված է այսպես կոչված ճապոնիայի հետ բարեկամության հաստատող պատգամավորության մեջ և նրա հետ մեկնել է Տոկիո։ Տրոցկիստներ Սյուչ-Լուն-շանը և Ջեն Սյուլ դյան ու արյունարբու մարդասպան Ժեն Զո-սյանը (կամ Ցե-ցինը) ճապոնական փողով Շանհայում հրատարակում են հատուկ թեր-թեր և ժուռնալներ՝ կոմկուսի, գոմինդանի և բոլոր հակաճա-պոնական մասսայական կազմակերպությունների դեմ ամեն տեսակ զրպարտություն տարածելու համար։ Մի՞թե այս բոլոր փաստերը չեն հաստատում լիակատար իրավացիությու-նը մեր մեծ գրող Լու-Սյունի, վորն ասել է, թե «իրենց ընթացքով տրոցկիստներն անարժան են ժամանակիս չինացի-ները լինելու»։ Մի՞թե այս բոլոր փաստերը չեն վկայում



այն մասին, վոր տրոցկիստները՝ համաձայնություն կայացրած լինելով ճապոնական հետախուզության հետ՝ օգնում են ճապոնա-կան իմպերիալիզմին Չինաստանը գավթելու։

Մի՞թե այս բոլոր փաստերը չեն վկայում այն մասին, վոր տրոցկիստները վոչ միայն կոմկուսի թշնամիներ են, այլ և ամ-բողջ չինական ժողովրդի։

Այս բոլոր փաստերը լիովին հաստատում են համայն աշխա-տավոր մարդկության մեծ առաջնորդ ընկեր Ստալինի խոսքերն այն մասին, վոր «ժամանակակից տրոցկիզմը դարձել է լրիվ և անսկզբունք մի բանդա վնասարարների, դիվերսանտների, լրտես-ների և մարդասպանների վորոնք գործում են օտարերկրյա պե-տությունների հետախուզական օրգանների առաջադրանքներով»։ Չինական ժողովուրդը և միջազգային հասարակայնությունը՝ գոմինդանի և Նանկինի կառավարության, ինչպես և տեղական զինվորական ու քաղաքական իշխանությունների ճապոնական ագրեսորի դեմ զինված պայքար մղելու վճռողականության և պատրաստականության աստիճանի մասին կդատեն ըստ նրանց վերաբերմունքին դեպի բոլոր ճապոնական գործակալներն ու ազգային դավաճանները և մասնավորապես դեպի ճապոնա-տրոց-կիստական ֆաշիստական գործակալները։ ԽՍՀՄ կառավարու-թյունն ու ժողովուրդները մեզ օրինակ են ցույց տալիս, թե ինչպես պետք է կռվել օտարերկրյա հետախուզության հետ ու մաքրել պետական, զինվորական և կուսակցական ապարատներն այդ իժերից, դրանով իսկ ամրացնելով մեր պաշտպանունակու-թյունը, ապահովելով մեր թիկունքներն օտարերկրյա ագրեսոր-ների հարձակումից։

Բացի վերոհիշյալ իննը լոզունգներից և պահանջներից ներ-քին քաղաքականության մեջ, կոմկուսը առաջադրեց նաև «հա-կաճապոնական արտաքին քաղաքականություն վարելու» լո-զունգը։ Չինական կոմկուսի Կենտկոմը և չինական խորհրդային հանրապետության Կենտգործկոմը դեռ իրենց 1935 թվի օգոս-տոսի 1-ի դիմումի մեջ առաջադրեցին արտաքին քաղաքակա-նության վերաբերյալ հատուկ մի կետ, վոր ասում է՝ կոնտակտ հաստատել ճապոնական իմպերիալիզմին թշնամաբար վերաբեր-վող բոլոր ժողովրդական մասսաների հետ (ճապոնական աշխա-տավոր ժողովրդի, կորեացիների, ֆորմոզացիների և ուրիշների հետ)—ընդհանուր թշնամու դեմ միասին պայքարելու համար. դա-շինք հաստատել այն բոլոր ազգերի և պետությունների հետ, վո-րոնք օգնում և համակրում են չինական ժողովրդի ազգային պայքարին, ինչպես նաև բարեկամական փոխհարաբերություն ստեղծել այն բոլոր պետությունների և ազգերի հետ, վորոնք բարի հարևանական չեզոքություն են պահպանում ճապոնական իմպերիալիզմի և չինական ժողովրդի միջև տեղի ունեցող ռազ-

մական գործողություններում։ Իսկ Հյուսիսային Չինաստանի դեպքերի առթիվ արած վերջին դեկլարացիաներից մեկում ՉԿԿ կենտկոմը առաջարկեց Նանկինի կառավարությանն անհապաղ սկսել ակտիվ հակաճապոնական արտաքին քաղաքականության իրագործումը, պաշտպանել խաղաղության միջազգային ֆրոնտը և մյուս յերկրների հետ կնքել հակաճապոնական պայքարի համար օգտակար ամեն տեսակ համաձայնություններ։

Վերոհիշյալ միջոցառումների կենսագործումն ինչպես ներքին, այնպես և արտաքին քաղաքականության բնագավառում կապահովի չինական ժողովրդին ոչ միայն իրոք համազգային զինված դիմադրություն կազմակերպելու հնարավորությունը, այլև հաղթանակ ձեռք բերելու ճապոնական ագրեսորի դեմ։

## ՉԻՆԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Չինական ժողովրդի պայքարը ժամանակակից իրադրության պայմաններում մտնում է նոր շրջան—ճապոնական ագրեսիայի դեմ հաջող համազգային զինված դիմադրության անմիջական կազմակերպության շրջանը։

Յեթե նախընթաց շրջանում գլխավոր խնդիրն այն էր, որ ճապոնական իմպերիալիզմի դեմ միահամուռ կերպով պայքարելու համար վերջ տրվի քաղաքացիական կռվին յերկրում, ապա այժմ, յերբ սկսվել է զինված պայքարը ճապոնական ագրեսորի դեմ, գլխավոր խնդիրն է կազմակերպել համազգային զինված դիմադրություն՝ ճապոնական զավթողներին Չինաստանից բոլորովին դուրս քշելու համար։

Յեթե նախընթաց շրջանում Չինաստանի կոմկուսին հաջողվեց որոշ չափով միայն հիմքը դնել գոմինդանի հետ մյուս կազմակերպությունների միասնական ազգային հակաճապոնական ֆրոնտ ստեղծելուն, ապա այժմ նա անմիջականորեն մաքառում է արագորեն և լրիվին ձևակերպելու այդ միասնական ազգային հակաճապոնական ֆրոնտը, որպես քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների համագործակցություն, և ստեղծելով համաչինական միասնական դեմոկրատական հանրապետություն՝ ազգային պաշտպանության համաչինական կառավարությամբ և համաչինական միացյալ հակաճապոնական բանակով։ Յեթե առաջ ճապոնական ագրեսիայի հաջող համազգային զինված դիմադրություն կազմակերպելու խնդիրը կանգնած էր Չինաստանի կոմկուսի առաջ որպես հեռանկար, ապա այսոր դա արդեն անմիջական և ակտուալ խնդիր է։ Յեվ այստեղից հետևում է, որ յեթե առաջ ՉԿԿ իր ուշադրությունն ու աշխատանքը կենտրոնացրել էր գլխավորապես Կարմիր բանակում ու խորհրդային շրջաններում և հենվում էր նախ և առաջ նրանց ուժերի վրա,



ապա այժմ մեր կոմունիստական կուսակցությունը պետք է հոգատարություն ունենա ոչ միայն Կարմիր բանակի ուժերն ամրացնելու և ավելացնելու մասին, այլև նրա լավագույն տրադիցիաները և մարտական ունակությունները պահպանելու մասին, որպես համաչինական բանակի ամենաառաջավոր, կարգապահ, համախմբված բաղադրիչ մասի։ Չինաստանի կոմունիստական կուսակցությունը պետք է հոգա նաև ոչ միայն խորհրդային շրջանների աշխատանքի բարելավման մասին, որպեսզի վերջիններս դարձնի հակաճապոնական պայքարի պատվարը, այլ, հենվելով ամբողջ Չինաստանի միլիոնավոր աշխատավորական մասսաների աճող հեղափոխական ուժի և հզորության վրա, նա պետք է պայքարի՝ բովանդակ յերկրի մյուս ռայոնները համաչինական դեմոկրատական հանրապետության ամուր բազան դարձնելու համար։ Դա նշանակում է, որ, առաջինը, ՉԿԿ-ի առաջ կանգնած է խնդիր՝ մեծ ուժ գործ դնել բանվորական դասակարգի միլիոնավոր մասսաների դաստիարակության և կազմակերպության վրա, դասակարգ, որ ներկայումս նորից սկսում է ակտիվ և բաց կերպով դուրս գալ հակաիմպերիալիստական ազգային ազատագրական պայքարում՝ որպես ամբողջ չինական ժողովրդի ամենաառաջավոր, ամենագիտակից և ամենահետևողական բանակը։ Չինական կոմունիստները գիտակցում են, որ նախընթաց շրջանում յերկրի խոշորագույն կենտրոնների բանվորների և նրանց պրոֆկազմակերպությունների միջև աշխատանքը յեղել է չափազանց թույլ. մինչդեռ բանվոր դասակարգի գիտակցության և կազմակերպվածության, նրա ակտիվության ու ձեռներեցության աճման կապակցությամբ պիտի աճի և ամրանա ոչ միայն կոմկուսի մասսայական ազդեցության բազան, այլ ճապոնական ագրեսորի դեմ համազգային պայքարը ևս կդառնա էլ ավելի ուժեղ։

Յերկրորդ, ՉԿԿ-ի առաջ կանգնած է խնդիր՝ աշխատել չինական ժողովրդի գերակշռող մեծամասնությունը կազմող լայն գյուղացիական մասսաները կազմակերպելու և համազգային ու համադեմոկրատական պայքարի մեջ ներգրավելու վրա։ Չինական կոմունիստները գիտակցում են, որ, չնայած գյուղացիության միջև աշխատանք տանելու իրենց հարուստ փորձին, կոմունիստները, բացի այն շրջաններից, որտեղ էր և գտնվում է ներկայումս Կարմիր բանակը, ընդհանրապես դեռ շատ քիչ են աշխատել գյուղացիությունը կազմակերպելու համար։ Մինչդեռ, որքան գյուղացիական մասսաները լայն և լավ կազմակերպված կլինեն, որքան ավելի ակտիվ կերպով կներգրավվեն նրանք հեղափոխական պայքարի մեջ, այնքան ավելի ուժեղ և հզոր կլինի հակաճապոնական ազգային-ազատագրական շարժումն ու այնքան ավելի վստահելի և ապահով կլինի նրա հաջող յելքը։

Երրորդ, ՉԿԿ-ի առաջ կանգնած է խնդիր՝ ուժեղացնել և խորացնել իր աշխատանքը չինական յերիտասարդության մեջ ընդհանրապես և սովորող յերիտասարդության մեջ՝ մասնավորապես։ Չինական կոմունիստները գիտակցում են, վոր աշխատանքը յերիտասարդության միջև առանձնապես թույլ է։ Չինական յերիտասարդությունը խորապես համակված ազգային ազատագրման վոգով, հերոսաբար և անձնվիրաբար հանդես է գալիս հակաճապոնական պայքարի առաջավոր ճակատներում, և նա կոչված է կարևոր դեր խաղալու չինական ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում։

Չորրորդ, ՉԿԿ առաջ կանգնած է խնդիր՝ ազգային հեղափոխական զորքերի բոլոր մասերում կազմակերպել իր անդամներին և ազնիվ հեղափոխական տարրերը, վորպեսզի զորքի մեջ բարձրացնի մարտական վոգին, ամրացնի հեղափոխական զինվորական կարգապահությունը, ցույց տա հերոսության և անձնվիրության օրինակներ և ապահովի բանակի և ժողովրդի փոխադարձ օգնությունը՝ դժվարին պատմական պայքարում մահացու թշնամու դեմ։

Հինգերորդ, ՉԿԿ ի առաջ խնդիր է կանգնած՝ ուժեղացնել իր ազդեցությունն ու աշխատանքը Մանջուրիայում և Ժեխեյում։ ՉԿԿ կարող է հպարտանալ նրանով, վոր մինչև այժմ կոմունիստները, չնայած մեծ դժվարություններին և խոշոր զոհերին, աշխատում են ու պայքարում Մանջուրիայում և Ժեխեյում։

Իր խոշոր պատմական հեղափոխական խնդիրների իրագործման ճանապարհին, մեր չինական կոմկուսակցությունն անխուսափելիորեն հանդիպում է բազմաթիվ դժվարությունների։ Այդ դժվարությունները, հասկանալի յե, կապված են չարանենգ թշնամու դեմ պայքարելու անհրաժեշտության հետ «մինչև ատամները զինված ճապոնական իմպերիալիզմի, վորը վարպետորեն ջլատում է Չինաստանի ուժերը և օգտագործում է այդ յերկրի ներքին պայքարն իր զավթողական նպատակների համար»[1] Այդ դժվարությունները նույնպես կապված են այն դժվարությունների հետ, վոր Չինաստանում գոյություն ունի ունևոր դասակարգերի ներկայացուցիչների մի վորոշ մաս, վորոնք՝ 1870—1871 թ. թ. ֆրանկո-պրուսական պատերազմի շրջանի ֆրանսիական բուրժուական գործիչների նման, իրենց դասակարգերի եգոիստական շահերն ավելի բարձր են դասում, քան ազգային պարտքի կատարումը, վորոնք հեշտությամբ դավաճանում են ազգին և վորոշ պայմաններում պիտի օգնեն ոտարերկրյա թշնամուն՝ վերջինիս չինական բանվոր դասակարգի, չինական ժողովրդի դեմ մղած պայքարում։ «Սակայն Չինաստանի կոմկուսի ճանապարհին կան նաև ներքին դժվարություններ։ Նա պետք է հաղթահարի դիմադրությունն աղանդավորական տարրերի, վորոնք չեն հասկանում, վոր ներկա պայմաններում չինական ժողովրդի ազատագրման միակ ճանապարհը — դա ճապոնական հարստահարիչների դեմ միասնական ազգային ֆրոնտ ստեղծելու ճանապարհն է։ Նա պետք է պայքարի նաև օպորտունիստ-կապիտուլյանտների դեմ, վորոնք պատրաստ են զոհելու կուսակցության և Կարմիր բանակի քաղաքական և կազմակերպչական ինքնուրույնությունը և լուծել նրանց մյուս կազմակերպությունների մեջ»[1]։

¹) Գ. Դիմիտրով. *Միասնական ֆրոնտի համար ֆաշիզմի և պատերազմի դեմ*, էջ 134, կուսհրատ, 1937 թ.



Ներկուսակցական բնույթ կրող առաջին դժվարությունը կապված է այն բանի հետ, վոր Չինական կոմկուսը վերջին տարիները կատարում է այնպիսի մի կտրուկ քաղաքական շրջադարձ, վորպիսին, յերևի, չգիտե կոմինտերնի մյուս սեկցիաներից և վոչ մեկը։ Գոմինդանի դեմ մղած առաջվա զինված պայքարի փոխարեն կոմկուսն այժմ պայքարում է հանուն՝ նրա և մյուս կազմակերպությունների հետ համագործակցության։ Կարմիր բանակի համարյա 10 տարի շարունակ. գոմինդանական և վոչ գոմինդանական զորքերի դեմ մղած քաղաքացիական պայքարի փոխարեն, կոմկուսն այժմ պայքարում է հանուն՝ Կարմիր բանակի, մյուս բոլոր չինական զորքերի հետ, մեկ համաչինական միասնական ազգային հեղափոխական բանակի վերածման։ Նանկինի կառավարությունը տապալելու և նրա տեղը համաչինական խորհրդային կառավարություն ստեղծելու համար մղած նախկին զինված պայքարի փոխարեն, կոմկուսն այժմ գոմինդանի և Նանկինի կառավարության հետ միասին պայքարում է հանուն՝ համաչինական միասնական իշխանության ստեղծման՝ ազգային պաշտպանության համաչինական կառավարություն ունեցող համաչինական միասնական դեմոկրատական հանրապետության ստեղծելու համար։ Դրա հետ միասին կոմկուսը բացահայտ կերպով հայտարարում է, վոր չինական ժողովրդի պայքարի ներկա էտապում Չինաստանի խորհրդայնացման իր լոզունգը հանում է։ Թեև մինչև այժմ կոմկուսը հիմնականում համեմատաբար հաջող է կատարում այդ քաղաքական շրջադարձը, սակայն բնավ չի կարելի ասել, վոր նրա սեփական շարքերում տակավին չեն գտնվի բավական մեծ թվով մարդիկ, վորոնք այդպիսի կտրուկ շրջադարձի ժամանակ չեն ընկնի գաղափարական խառնաշփոթության և գործնական սխալանքների մեջ։ Հենց այժմ է, վոր կոմկուսն ավելի քան յերբևիցե պետք է մղի ամենալուրջ պա-

¹) Գ. Դիմիտրով. *Ֆաշիզմի և պատերազմի դեմ միասնական ճակատի համար մղվող պայքարում*, էջ 135, կուսհրատ, 1937 թ.

ղափարական պայքար և ուժեղացնի իր կադրերի մարքս-լենինյան թեորետիկական դաստիարակությունը։

Չինական կոմունիստները՝ վորպես իրենց ժողովրդի հավատարիմ զավակները, հանդես են գալիս ամենաառաջավոր ճակատներում՝ պաշտպանելու համար ազգային գոյությունը, Չինաստանի ազգային անկախությունը. սակայն դա բնավ չի նշանակում՝ վոր չինական կոմունիստների փոխարկումը բուրժուական ազգայնականների, վոչ էլ նրանց լուծումը վերջինների շարքերում. Կոմունիստների և բուրժուական ազգայնականների մեջ կա ու միշտ էլ կլինի անանցանելի մի սահմանագիծ։ Ամենավճռական կերպով հանդես գալով ի պաշտպանություն մեր ժողովրդի ազգային շահերի, մենք մնում ենք հավատարիմ հեղափոխական ինտերնացիոնալիստներ և հետևողական պրոլետարական մարտիկներ։

Կոմունիզմի և Սունյատսենիզմի մեջ գոյություն ունեցող սկզբունքային տարբերություններին հակառակ, հայտարարելով իրենց Սուն Յատ-սենի հիմնական հեղափոխական լոզունգների և չինական ժողովրդի լավագույն հեղափոխական տրադիցիաների կողմնակից, կոմունիստները վոչ մի դեպքում և վոչ մի րոպե չեն դադարում մարքս-լենինյան ուսմունքի հավատարիմ հետևողները լինելուց։

Վորոշ պատմական պայմաններում պաշտպան դուրս գալով հանուն՝ գոմինդանի և մյուս կազմակերպությունների հետ միասնական ազգային ֆրոնտ ստեղծելու՝ ընդհանուր պլատֆորմի հիմունքներով ընդհանուր թշնամու դեմ համատեղ պայքարելու համար, մենք, չինական կոմունիստներս, վոչ մի դեպքում և վոչ մի րոպե թույլ չենք տա մեր սեփական կուսակցության քաղաքական և կազմակերպչական ինքնուրույնության կորուստ և կամ մեր սեփական կոմունիստական դեմքի ու դրոշի թաքցնումը։ Պետք է միշտ հիշել ընկեր Դիմիտրովի ցուցմունքն այն մասին, վոր «Չինաստանի կոմկուսը, ազնվորեն և լոյալ կերպով կատարելով հափշտակիչների դեմ պայքարելու վերաբերյալ կնքած համաձայնություններից բղխող իր պարտականությունները, մտադիր չէ կանգնել վոչ դաշնակիցներին կուրորեն հավատալու ուղու վրա և վոչ էլ կապիտուլյացիայի ուղու վրա»[1]։

Վորոշ դասավորված պատմական իրադրություններում ակտիվորեն հանդես գալով հանուն միասնական համաչինական դեմոկրատական հանրապետություն ստեղծելու և համաչինական պարլամենտ հրավիրելու, չինական կոմունիստները վոչ մի դեպքում և վոչ մի րոպե չեն դառնում բուրժուական դեմոկրատներ և չեն

---

1) Գ. Դիմիտրով. Ֆաշիզմի և պատերազմի դեմ միասնական ճակատի համար մղվող պայքարում, էջ 135, Կուսհրատ, 1937 թ.



դադարում խորհրդային իշխանության և սոցիալիզմի հետևողական կողմնակիցներ լինելուց։

Ներկուսակցական բնույթ կրող յերկրորդ դժվարությունը կապված է հին կուսակցական կադրերը նոր խնդիրներին համապատասխանորեն վերադաստիարակելու և վերջին տարիներում աճած մասսայական հեղափոխական ակտիվիստներից և պարագլուխներից, նոր կադրեր առաջ քաշելու և դաստիարակելու անհրաժեշտության հետ։ ՉԿԿ այժմյա կադրերի մեծամասնությունը դաստիարակվել և կոփվել է քաղաքացիական պատերազմում. Նրանցից շատերը գյուղացիական ծագում ունեն։ Նրանք ունեն գոմինդանի և նրա զորքերի դեմ զինված պայքարելու փորձ, բայց նրանցից շատերը վոչ փորձ ունեն մասսաների համար պայքարելու՝ խորհրդային իշխանության և Կարմիր բանակի բացակայության պայմաններում, և վոչ էլ նույնիսկ պատկերացնում են խոշոր քաղաքների բանվորական շարժումը։ Այդ պատճառով կուսակցական հին կադրերը աշխատանքի նոր պայմաններին և մեթոդներին համեմատ դաստիարակելը բոլորովին հեշտ գործ չէ։

Վոչ պակաս կարևոր խնդիր է նաև առաջին հերթին բանվորներից նոր կադրեր դաստիարակելու և առաջ քաշելու գործը և առաջին հերթին՝ բանվորներից։ Վերջին տարիներում աճել են և աճում են մասսայական հակաճապոնական շարժման և գործադուլային պայքարի բազմաթիվ ակտիվիստներ և առաջնորդներ։ Նրանց միջից կոմկուսը կարող է և պետք է վերցնի թարմ ուժեր և նոր ռեզերվներ, իր նոր մարտունակ կադրերը, վորոնք անմիջապես կապված են լայն մասսաների հետ և տիրապետում են պայքարի ու աշխատանքի նոր փորձին։ Կուսակցությունը նրանց օգնել է և պետք է օգնի, վորովհետև կոմունիստները գնահատում են մեր ժողովրդի ազնիվ և ընդունակ զավակներին։ Հակաճապոնական շարժման այժմյա ակտիվիստներից և առաջնորդներից շատերն ազգային-հեղափոխական պայքարի պրոցեսում, ծանոթանալով կոմունիզմի թեորիային և պրակտիկային, ավելի և ավելի մոտենում են մեր կուսակցությանը և մոտ ապագայում կդառնան մեծ կոմկուսակցության վորդիներն ու դուստրերը։ Նրանց մի մասն արդեն մտել է Չինաստանի կոմկուսի շարքերը։ Բայց միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ նաև այն, վոր հակաճապոնական շարժման ակտիվ մասնակցողները բոլորը չեն կարող կոմունիստներ լինել։ Միայն հակաճապոնական պայքարին մասնակցելու լոկ ցանկությունն ու վճռողականությունը դեռ բավական չեն կոմունիստական կուսակցության անդամ լինելու համար։ Կոմունիստները վոչ միայն ազգային հեղափոխական շարժման մարտիկներն են, այլ և բանվոր դասակարգի և ամբողջ աշխատավոր մարդկության ազատագրման համար, այսինքն պրոլետարիատի դիկտատուրայի, խորհր-

դային իշխանության և կոմունիզմի համար հետևողական պայքար մղողներն են։

Ներկուսակցական բնույթ կրող յերրորդ դժվարությունը նայն, վոր ներքին պատերազմի դադարման և համազգային զինված աշտապանողական պայքարի արդի պայմաններում չինական հեղափոխության թշնամիները, և առաջին հերթին՝ ճապոնական հետախուզությունն, անխուսափելիորեն ավելի ուժեղ կերպով կաշխատեն փորձել կոմկուսի շարքերն անցկացնել լրտեսներին, պրովոկատորներին, դիվերսանտներին, տեռորիստներին և վնասարարներին, վորոնք հավաքագրվում են նախ և առաջ քողարկված տրոցկիստներից՝ չենդուսյուիստներից, չոչժանյունականներից և այլն, վորպեսզի ներսից ջլատել ամենահեղափոխական, ամենամարտունակ ու մեր յերկրի՝ նրանց համար ամենասարսափելի կուսակցության — Չինաստանի կոմկուսի ուժն ու հզորությունը։ Այդ հանգամանքը նամանավանդ վտանգավոր է այն պատճառով, վոր մեր կուսակցության շարքերում չափազանց թույլ և անբավարար է իրականացվում հեղափոխական զգաստությունը և սիստեմատիկ պայքարը հակառակորդների պրովոկացիաների ու լրտեսության դեմ։ Թույլ է դրված նույնպես բոլոր կուսակցական կազմակերպությունների, նույն թվում նաև ղեկավար կազմակերպությունների կողմից կադրերի ստուգման գործը։

Այո՛, Չինաստանն ապրում է իր պատմության ամենալուրջ և ամենա՛կրիտիկական մոմենտը։ Չինաստանի ազգային գոյության, ճապոնական ագրեսորի դեմ համազգային և համաժողովրդական զինված դիմադրության կազմակերպման և ընդհանուր խաղաղության համար մղվող մեծ պայքարի ճանապարհին կանգնած են խոշորագույն դժվարություններ։

Ամբողջ չինական ժողովուրդը, Չինաստանի յուրաքանչյուր քաղաքական կուսակցություն և խմբավորում, յուրաքանչյուր քաղաքական, զինվորական և հասարակական գործիչ այսօր կանգնած է համաշխարհային-պատմական քննության առաջ։ Չինական կոմունիստները, լինելով բանվոր դասակարգի և համայն աշխատավոր մարդկության մեծ ուսուցիչների՝ Մարքսի, Էնգելսի, Լենինի և Ստալինի հավատարիմ աշակերտները և իրենց ժողովրդի արժանի վորդիներն ու դուստրները, չեն վախենում այդ դժվարություններից, այլ կգտնեն նրանց հաղթահարելու ուղին։ Չինական կոմունիստները վստահ և վճռաբար, ամբողջ չինական ժողովրդի հետ միասին, իրենց կողմն ունենալով ամբողջ միջազգային պրոլետարիատի և առաջադեմ մարդկության համերաշխությունն ու աջակցությունը, թևակոխեցին պատմական մեծ կռիվը ճապոնական իմպերիալիզմի դեմ՝ նոր, անկախ, ազատ և յերջանիկ մեծ չինական հանրապետության համար։

---

Գինը 40 կոպ.
Цена 40 Коп.

Д5'5

ВАН МИН

Новый этап агрессии японского империализма и новый период борьбы китайского народа

(На армянском языке)

РОСТОВСКОЕ ОБЛАСТНОЕ
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО „БОЛЬШЕВИК"
Ростов-Д, Ворошиловский пр., № 27.

ՀՀ Ազգային գրադարան
NL0187922